hothen de chryson oryssontes, *այսինքն «որտեղից հանում էին ոսկի»· անգլիացին թարգմանում է ճիշդ՝* which is the place *եւայլն:*

Պատմիչն այնքան տխմար չէր, որ կարծէր, թէ բերդի մէջ հանքագործութեամբ էին պարապում: Եւ վերջապէս ի՞նչ է նշանակում պատմիչի բացատրիկ դարձուածքը՝ «այսպէս կոչեցեալ Փարանգիոն», որ գործ չէ ածում ուրիշ տեղ անունների վերաբերեալ:

Այս դիտողութիւններից եղրափակել էինք, որ Փարանգիոն թերեւս հէնց «հանք» է նշանակում եւ փորձել էինք համապատասխան ստուգաբանութիւն տալ, համեմատելով farhangion *հայ–իրանեան* hրահանգ *բառի հետ:*

Այս առթիւ լեզուագէտ Աճառեան նկատում է, որ «Հրահանգին տալիս ենք այսպիսի նշանակութիւն, որ այս բառը չունի բնաւ ոչ պարսկերէնում եւ ոչ հայերէնում», եւ որ «Ներելի չէ բառերին տալ այն իմաստը, որը կամենում ենք ունենալ, բոլորովին անտեսելով նրանց բուն նշանակութիւնը», եւ վերջապէս «հնչական պահանջները եւս նկատի չեն առնուել»: Եւ այս ասում է այն մարդը, որ Փարանգիոն վերագանում էր Բարդողոսի մէջ:

Զարմանալի են այս ինքնաբաւ առարկութիւնները: Պարթեւ frahang *բառը տալիս է հայերէնում* hրահանգ, *եւ պարսկերէնում* farhang *ինչպէս որ* frahat *Պարթեւ անունը դառնում է հայերէնում Հրահատ եւ պարսկերէնում* Farhad *կամ Պարթեւ* framan *հայերէն հրաման, պարսկ·* farman: *Հընչական թերութիւն տեսնել այստեղ, նշանակում է հասկացողութիւն չունենալ հնչարանութեան մասին:*

Ինչ վերաբերում է բառի իմաստին, պ· Աճառեան եւս սխալւում է անպատասխանատու պարսկագիտութեամբ: Farhang *շատ նշանակութիւն ունի· ի միջի այլոց այդպէս է կոչւում* canalis subteraneus, *ինչպէս կարելի է տեսնել Վուլլերս հռչակաւոր պարսկլատին բառգրքից: Նոյնը հաստատում է Ցենկերի բառգիրքը, մեկնելով որպէս* unterirdischer Gang odor Canal. *Ներկայումս պարսիկները հանքին ասում են* kan, *որ արմատական է հայ* ակն *բառին եւ նշանակում է ստուգաբանօրէն ստորերկրեայ կամ գետնափոր անցք», այն ինչ որ Փանհանդ, այլ եւ «գետնափոր ջրանցք», այն որ էջմիածնում կոչւում է քանքան: Նոյն արմատից է նմանապէս աւելի սովորական* kahriz *քահրիզ բառը ջրանցքի իմաստով, այլ եւ* farghan *ջրանցք:*

Արդ՝ եթէ kan *«գետնափոր անցք», նշանակում է միեւնոյն ժամանակ եւ* hաիf, *ինչո՞ւ* farhang=*«գետնափոր անցք», չէր կարող գործ ածուել նմանապէս հանքի մտքով: Անշուշտ, կարող էր: Դարձեալ պարսկերէն* kani *նշանակում է հանածոյ, նոյն իմաստը կարող ենք ենթադրել եւ* farhangi *ձեւի համար: Աւելացնելով յունական* on *վերջաւորութիւնը կը ստանանք* farhangion. *Հնարաւոր է նաեւ որ* ion *վերջաւորութիւնն ամբողջապէս յունական է: Կարծում ենք, պ· Աճառեանի վերամբարձ ընդդիմախօսութիւնը անհիմն է:*

* * *

Նոյնչափ անտեղի են եւ պ· Աճառեանի ճառերը Բողբերդի խնդրում:

Տեսանք, որ Փարպեցին Բողբերդը դնում է Բասենում, իսկ Պրոկոպ՝ Կարինի սահմաններին մօտ:

Պ· Աճառեան հարկ է տեսնում մեզ ուսուցանելու վարժապետական սովորութեամբ, որ այս երկու յուցումները իրար հակադիր չեն, որ բերդը կարող է լինել Բասենում եւ Կարինի մօտ: Բայց ո՞վ ասաց, որ այստեղ հակադրութիւն կայ: Արդոյ բանասէրի խրատը ամենից շատ իրեն էր պէտք, որպէսզի Բողբերդը Բասենից Թորթում չանէր:

Բողբերդի անունը չէ պահուել եւ տեղն անյայտ է: Մանաւանդ հետազօտում տեղի վրայ մի օր Թերեւս վեր հանել արձանագրութեան կամ մի այլ նշանի միջոցով հինաւուրց բերդի հետքերը: Առայժմ միայն ենթադրութիւններ կարող են լինել:

Ներկայումս Բասենի նշանաւոր բերդն է Հասան–կալէ: Հին Բողբերդը թւում է որ մի տեսակ հակակշիռ էր պարսից հողի վրայ ընդդէմ բիւզանդական Կարինի: Ուստի հաւանական է, որ նա դանւում էր Հասան–կալէի տեղը եւ ունէր այն ռազմագիտական նշանակութիւնը, որ փակում էր գլխաւոր ուղին, որ դը-